

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ՍՈՒՐԱԴ ՆԱՍՐԱԹՅԱՆ

Ճարտարադեպտայան դոկտոր, ԵԳՊԱ դոկտոր

ՆՆ ԳԱԱ թղթակից անդամ

ՆՆ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Ճարտարադեպտայունը դարերի ընթացքում եղել է հայ ժողովրդի մշակույթի կարևորագույն բաղկացուցիչ բնագավառը: Բազմաթիվ հուշարձաններում արտահայտվել են հայ շինարարական արվեստի ազգային ինքնատիպությունը, բարձր մակարդակը եւ գեղարվեստական հարուստ ավանդները:

Նին եւ միջնադարյան Նայաստանի ճարտարադեպտայունը XIX դարից դարձավ արեւմտաեւրոպացի եւ ռուս գիտնականների՝ արվեստաբանների, հնագետների, ազգագրագետների հետաքրքրության եւ ուսումնասիրության առարկան: Նայաստանյան այցելությունների ընթացքում նրանց հավաքած նյութերը գիտական հանրությանը ներկայացրեցին հայկական ճարտարադեպտայուն մշանակալից հուշարձանները: Այս գործում մեծ դեր խաղացին շվեյցարացի Դյուբուա դը Մոնդերյոյի, ֆրանսիացի Շառլ Տեքսիեի, գերմանացի Կարլ Շնաագեի, անգլիացի Ջեյմս Գերգյուտոնի եւ, հատկապես, ֆրանսիացի Օգյուստ Շուագիի աշխատությունները: Վերջինս համաշխարհային ճարտարադեպտայուն դասմությանը նվիրված իր ընդարձակ ուսումնասիրությունում առանձնացնում է հայկականը, նշում նրա դերը առանձին ձեւերի ստեղծման գործընթացում: Բայց, ընդհանուր առմամբ, եւրոպացի հետազոտողների գործերում ակնհայտ է բյուզանդամեպտայունը՝ քրիստոնեական ճարտարադեպտայուն ձեւավորման գործընթացում:

Նայաստանի միջնադարյան ճարտարադեպտական հուշարձանները, հիմնականում դրանց նկարագրությունը, դասմական տեղեկությունները, վիճագրությունը հրատարակվեցին նաեւ հայ հեղինակների՝ Ն. Շահխաթունյանցի, Ս. Չալայանի աշխատություններում եւ, հատկապես, Դեւոնդ Ալիշանի երկերում:

Նայկական միջնադարյան ճարտարադեպտայուն հիմնարար հետազոտության գործում կարևորագույն դեր խաղացին ականավոր գիտնական, հայագետ Նիկողայոս Մառի ղեկավարությամբ Նին Նայաստանի հռչակավոր մայրաքաղաք Անիի ղեղումները (XIX դ. վերջ, XX դ. առաջին երկու տասնամյակ), եւ այս բնագավառում առաջին անգամ մասնագետ ճարտարադեպտի մասնակցությունը՝ հանձնին մեծ երախտավորի՝ Թորոս Թորամանյանի: Առանց

չափազանցության կարելի է ասել, որ սա շրջադարձային եղավ հին եւ միջնադարյան Նայաստանի ճարտարադեպտության ուսումնասիրության գործում:

Թորամանյանը ծնվել է 1864 թ. Փոքր Նայքի Շաղին Գարահիսար (Սեւաբերդ) քաղաքում: Տասնչորս տարեկան հասակում գրկվել է ծնողներից: Ուսանել է տեղական վարժարանում, որտեղ իր մտերիմ ընկերն է եղել Անդրանիկ Օզանյանը՝ աղագա մեծ հայրենասերը եւ գորավարը: 1884 թ. երկուսով մեկնել են Կոստանդնուպոլիս, որտեղ Թորամանյանն աղբյուր ստեղծելու համար զբաղվել է բանվորությամբ, միաժամանակ նախատարաստվելով ընդունելության քննությունների՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Նա 1888 թ. ընդունվում է Կ. Պոլսի կայսերական գեղարվեստի ճեմարանի ճարտարադեպտական բաժինը, որի դասախոսները, առանց բացառության, երոտացիներ էին, իսկ դասավանդումը եղել է ֆրանսերեն:

1893 թ. Թորամանյանը հաջողությամբ ավարտում է ուսումնառությունը՝ արժանանալով երկրորդ մրցանակի, եւ անցնում աշխատանքի՝ որդես նախագծող ճարտարադետ: Սակայն 1895 թ., երբ Թուրքիայում սկսվում են հայերի համիդյան կոտորածները, Թորամանյանն անցնում է Բուլղարիա: Սկզբում նա ստեղծագործել է Սոֆիայում, սակայն այստեղ նրա կառուցած շենքերն ավերվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: 1896 թ. Թորամանյանը տեղափոխվում է Վառնա, որտեղ մինչեւ 1900 թ. կառուցում է մի շարք հասարակական եւ բնակելի շենքեր, որոնցից մի քանիսն այսօր դեռ պահպանվել են եւ հանդիսանում են Բուլղարիայի XIX դ. ճարտարադեպտության լավագույն նմուշներից:

1900 թ. նա կարճատեւ տեղափոխվել է Ռումինիա, աղա իր խնայողությունների հաշվին ճանապարհորդել է՝ այցելելով Պարսկաստան, Սիրիա, Եգիպտոս, հետո Ղունաստան, Իտալիա, Ֆրանսիա: Այդ երկրներում նա ծանոթացել է համաշխարհային ճարտարադեպտության գլուխգործոցներին, աղա, 1902 թ. հաստատվելով Փարիզում, որդես ազատ ունկնդիր հաճախել է Սորբոնի համալսարան, հետեւել արվեստի ու ճարտարադեպտության դասընթացներին, հաճախել թանգարաններ, դարձել գրադարաններում: Այս բոլորը ճարտարադետական-ստեղծագործական արդեն մեծ փորձ ունեցող Թորամանյանին զգալի հարստացրել են տեսական գիտելիքներով, համաշխարհային շինարարական արվեստի խոր իմացությամբ:

Փարիզում Թորամանյանի վաղեմի ծանոթ, հնագետ եւ արվեստաբան Կարադեպ Բասմաճյանը (որը հրատարակում էր «Բանասեր» հանդեսը եւ 1901 թ. դրանում հոդված էր տղագրել Չվարթնոցի մասին) գիտարշավ է ծրագրում դեպի Անի՝ ծանոթանալու նրա ճարտարադետական հուշարձաններին, վիճագրությանը եւ դրանք հրատարակելու իր հանդեսում: Նա հանգանակությամբ գումար

Է հավաքում եւ առաջարկում Թորոս Թորամանյանին շորս ամսով մասնակցել գիտարշավին՝ որդես ճարտարադետ՝ հուշարձանները տեղում ուսումնասիրելու եւ չափագրելու, դրանք իր հանդեսում հրատարակելու նդատակով: Թորամանյանը սիրով համաձայնում է եւ 1903 թ. առաջին անգամ գալիս Անի, ու այդդես սկսվում է մոտ երեք տասնամյակ, առանց ընդհատման, նրա անձնուրաց աշխատանքը հայկական ճարտարադետության գիտական եւ կարեւորը՝ մասնագիտական ուսումնասիրության բնագավառում:

Այս գործում նրա առաջին տղագիր աշխատանքը եղավ Խաչիկ վարդադետ Դադյանի տեղումներով բացված Չվարթնոցի տաճարի ճարտարադետությանը եւ կառույցի ծավալատարածական հորինվածքին նվիրված 1905 թ. հոդվածը «Մուրճ» ամսագրում: Մինչ այդ, նա մանրամասն չափագրեց տաճարի հատակագիծը եւ տեղումներով բացված բոլոր բեկորները: Թորամանյանը սկսեց ուսումնասիրել Չվարթնոցի ավերակները տեղումները դեռ չավարտված, եւ դա բարեբախտություն եղավ, քանի որ դրա շնորհիվ կորստից փրկվեցին տաճարի շատ մանրամասներ, որոնք կկորչեին Խաչիկ Դադյանի դիլետանտական տեղումների հետեւանքով: Իսկ դրանք կարեւոր էին, ինչդես նշում է Թորամանյանը, տաճարի ընդհանուր հորինվածքի ու ներքին եւ արտաքին ձեւերի վերակազմության համար:

Չվարթնոցի տաճարը Թորամանյանը վերակազմեց եռաստիճան, ուղղաձիգ առանցքի շուրջը դեղի վեր փոքրացող համակենտրոն գլանաձեւ ծավալներով, որոնցից երկրորդ հարկինը հենվում էր առագաստաձեւ ութ թաղերի վրա: Այս վերակազմությունը բուռն վեճերի եւ ընդդիմախոսության առիթ հանդիսացավ: Սակայն, Անիում 1906 թ. տեղումներով բացված, հայ մեծանուն Տրդատ ճարտարադետի կառուցած Գագկաշեն Ս. Գրիգոր տաճարը (որը, ըստ դատմական տեղեկության, եղել է Չվարթնոցի կրկնօրինակը), ինչդես նաեւ Գագիկ Բագրատունի արքայի քարե արձանը տաճարի եռաստիճան մանրակերտով, հաստատեցին Չվարթնոցի թորամանյանական վերակազմությունը:

Անվանի ճարտարադետ Միքայել Մազմանյանը դիտուկ բնորոշել է այդ գիտական սխրանքը. «Չվարթնոցը վերականգնելու համար այնդես, ինչդես արել է Թորամանյանը հիմնահատակ կործանված բեկորներից, դետք է լիներ Չվարթնոցը կառուցող ճարտարադետին համագոր կարողության տեր ստեղծագործող»:

Թորամանյանի համար բախտորոշ եղավ Անիում Նիկողայոս Մառի արշավախմբին մասնակցելը, որ չափագանց օգտակար էր Նայաստանի շինարարական արվեստի, հայկական կարեւորագույն հուշարձանների ուսումնասիրության՝ նրա աշխատանքի համար: Մառը բարենդաստ դայմաններ ստեղծեց Թորամանյանի համար, օժանդակեց բարոյադես (որն այդ տարիներին խիստ

կարելու էր), ռուսական գիտական շրջանակներին ծանոթացրեց նրա կատարած աշխատանքներին: Ռուսաստանի կայսերական գիտությունների ակադեմիայի հատուկ հանձնաժողովը, բաղկացած այդ բնագավառի ականավոր գործիչներից, իր եզրակացության մեջ նշեց, որ Թորամանյանի իրականացրած գործերը «գիտական եւ գեղարվեստական մեծ արժեք ունեն, եւ Անիում կատարած նրա աշխատանքները շատ օգտակար են գիտության եւ արվեստի համար»:

Թորամանյանն Անիում Մառին աշխատակցեց մինչեւ 1912 թ.: Այդ ժամանակաշրջանում նա մանրամասն ուսումնասիրեց Անիի եկեղեցական եւ աշխարհիկ հուշարձանները, չափագրեց, կազմեց մի քանիսի վերանորոգման ու ամրացման նախագծերը, ավերվածների վերակազմությունները: Նա չսահմանափակվեց Անիի հուշարձաններով, այլ եղավ Պատմական Շիրակի, Արագածոտնի շատ բնակավայրերում, որտեղ ուսումնասիրեց դրանցում կանգուն եւ կիսավեր հուշարձանները: Նսկայական փաստական նյութ հավաքելով՝ Թորամանյանը գիտական վերլուծությամբ այն մշակեց, որի արդյունքում եղան նրա խոր գիտական, փաստական նյութի հիման վրա կատարած եզրահանգումներն ու տեսակետները հայկական հին եւ միջնադարյան ճարտարապետության կազմավորման եւ զարգացման սկզբունքային հարցերի վերաբերյալ: Դրանք նա հրատարակեց այդ տարիների հայկական ամսագրերում («Մուրճ», «Ախուրյան», «Անահիտ», «Գեղարվեստ», «Ազգագրական հանդես»):

Թորամանյանի տղագրած ուսումնասիրությունները վերաբերում էին ինչ-որ եւս միջնադարյան Ղայաստանի առանձին կարելու էր հուշարձաններին, այնպես էլ հայկական ճարտարապետության սկզբնավորման եւ զարգացման Պատմության տեսական, մինչ այդ երբեւէ չուսումնասիրված խնդիրներին:

Առանձին գրքով հրատարակվեց նրա «Տեկոթի տաճարը» մենագրությունը (Թիֆլիս, 1911)՝ նվիրված համաքրիստոնեական ճարտարապետության այդ հանգուցային հուշարձանին: Եւ Թորամանյանի չափագրությունները, լուսանկարները լուսանկարները լուսանկարները միակ նյութերն են այսօր այլեւս գոյություն չունեցող, սակայն ժամանակին լրիվ կանգուն այդ հսկա կառույցի:

Մենագրական ուսումնասիրություն է նաեւ Թորամանյանի հեղինակած՝ Էջմիածնի Մայր տաճարին նվիրված ծավալուն հոդվածը: Նետաքրքրական է, որ քրիստոնեական եկեղեցական ճարտարապետության այդ, հավանաբար առաջին, գմբեթավոր եկեղեցական շենքի մասին նրա ուսումնասիրությունը նախադաս տղագրվեց ռուսերեն՝ Ն. Մառի թարգմանությամբ, 1909 թ. Սանկտ Պետերբուրգում:

Թորամանյանը բազմաթիվ հնագիտական ուղեւորություններ է իրականացրել, սկզբում Արեւմտյան Ղայաստանում, ապա՝ Խորհրդային Ղայաստանում, որոնց ընթացքում ուսումնասիրել, մասնակի չափագրել եւ լուսանկարել է մոտ

ութսուն զաշտամունքային եւ աշխարհիկ, մինչեւ այդ շուտամնասիրված առանձին հուշարձաններ ու համալիրներ եւ շարադրել իր դիտողությունները: Այդ բոլորն անգնահատելի փաստական նյութ է հայ ճարտարապետության զարգացման զատնության համար, մանավանդ շատ հուշարձաններ, հատկապես Արեւմտյան Նայաստանում, այսօր արդեն գոյություն չունեն: Թորամանյանը շարադրեց հայ ճարտարապետության սկզբնավորման, զարգացման օրինաչափություններին, նրա զատնության զարբերացման, եկեղեցական շենքերի՝ Նայաստանում ստեղծված տիղերին եւ շատ ուրիշ այլ տեսական խնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ: Դրանցում փաստական նյութի հիման վրա, գիտական խոր վերլուծությամբ ցուցադրեց ու հիմնավորեց հայկական ազգային ճարտարապետության ձեւավորման ինքնուրույնությունը, ազդեցությունը մի շարք մոտ եւ հեռավոր երկրների շինարարական արվեստի վրա: Քննադատելով արեւմտյան գիտնականների բյուզանդամետ կանխակալ տեսակետները՝ նա ցուցաբերում է իր խոր գիտելիքները ճարտարապետության համընդհանուր զատնության հարցերում:

Նրա ուսումնասիրությունները եւ տեսակետները՝ հայկական ճարտարապետության զատնության շատ հիմնախնդիրների վերաբերյալ, հանդիսացան այն անկյունաքարերը, որոնց հիման վրա Նայաստանի շինարարական արվեստի ձեւավորման ու զարգացման զատնությունը շարադրեցին Թորամանյանի հետնորդները, նրա գործի շարունակողները:

Առանձին զետք է նշել Թորամանյանի համագործակցությունը Վիեննայի համալսարանի զրոֆեսոր, արեւտասերտոլական նշանավոր արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու հետ, որը 1913 թ. Նայաստան այցելեց իր գիտական արշավախմբի հետ: Թորամանյանը մեծադեպ օժանդակեց նրա աշխատանքների հաջողությանը, եղավ խորհրդատու, ծանոթացրեց իր հավաքած հսկայական փաստական նյութին, միջնադարյան հայկական ճարտարապետության ձեւավորման ու զարգացման, ինքնատիտության՝ գիտականորեն հիմնավորված իր տեսակետներին: Եւ Ստրժիգովսկին նրան առաջարկեց համատեղ զիրք գրել հայկական ճարտարապետության մասին՝ ներկայացնելով IV–XI դդ. Նայաստանի կարեւորագույն հուշարձանները: Թորամանյանն ընդունեց այդ առաջարկը՝ տրամադրելով իր մեծաքանակ չափագրությունները եւ այլ փաստական նյութեր: Սակայն, 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային զատերագմն ընդհատեց նրանց կադրը, եւ Ստրժիգովսկին 1918 թ. երկու մեծադիր հատորներով հրատարակեց «Նայերի ճարտարապետությունը ու Երտոլան» ուսումնասիրությունը, որտեղ արժանին է մատուցում Թորամանյանի ներդրմանը այդ կոթողային աշխատանքում:

Ստրժիգովսկու զիրքը հեղաշրջող դեր խաղաց արեւմտյան արվեստագի-

տության մեջ, առաջին հերթին շնորհիվ լատինական, վիճագրական հսկայական փաստական նյութի առկայության, որոնցով հիմնավորվում էր հայկական մոնումենտալ ճարտարապետության ձևավորման ու զարգացման ինքնուրույնությունը եւ նրա ազդեցությունը արեւմտաեւրոպական շինարարական արվեստի, ռոմանական ու գոթական ճարտարապետության վրա: Եւ դրանում իր կարեւոր դերն ունեցան Թորոս Թորամանյանի փաստական նյութերն ու եզրահանգումները:

Ինքը՝ Թորամանյանը, ծրագրում էր գրել հայկական միջնադարյան ճարտարապետության լատինությունը: Սակայն, ցավոք, դա չիրականացավ: 1918 թ. թուրքական զորքերի՝ Ալեքսանդրապոլի վրա հարձակման ժամանակ նա կորցրեց իր արխիվը՝ չափագրությունները, գրառումները, լուսանկարները, որը ծանր հարված եղավ գիտնականի համար: Իսկ մանրամասն ուսումնասիրելով լատինական Շիրակի եւ մասամբ Այրարատի հին եւ միջնադարյան հուշարձանները՝ նա ժամանակ չունեցավ հետազոտելու նաեւ Վաստուրականի, Սյունիքի, Լոռի-Գուգարքի, Արցախի շինարարական արվեստը:

Թորամանյանը կորցրեց առողջությունը 1925 թ. ծանր ավտովթարից եւ վախճանվեց ութսուն տարի առաջ՝ 1934 թ.:


Նրա թողած գիտական ժառանգությունը Թորամանյանի գործը շարունակող՝ հայ ճարտարապետությունն ուսումնասիրողների համար ուղեցույց է հանդիսանում: Այսօր էլ վերահրատարակվում եւ հրատարակվում են նրա ինչդեպ տղազիր, այնդեպ էլ անտիղ գործերը: Դեռեւս 1942 թ.՝ Նայրենական մեծ դատերազմի այդ ծանր տարում, Երեւանում տղազրվեց «Նյութեր հայկական ճարտարապետության լատինության» խորագրով նրա աշխատությունների ժողովածուի առաջին հատորը, իսկ 1948 թ.՝ երկրորդը: Երկուսն էլ կազմել, խմբագրել եւ հրատարակության է դատարաստել Կարո Ղաֆաղարյանը:

Այս հատորներն այսօր էլ հայկական ճարտարապետության լատինությանը բոլոր զբաղվողների համար սեղանի գիրք են հանդիսանում՝ չկորցնելով իրենց արդիականությունը: Դրա վկայությունն է վերջերս այդ երկու հատորների մեկ գրքով եւ տղազրական բարձր որակով վերահրատարակումը, որը համատեղ իրականացրել են Երեւանի Պետական համալսարանը եւ Նայաստանի լատինության թանգարանը: Իսկ Նայաստանի մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ լատինական միջավայրի դահլիճային ծառայությունը ձեռնամուխ է եղել հրատարակելու Թորոս Թորամանյանի դահլիճային չափագրությունները մեծադիր, շքեղ լուսանկարով, լրացված լուսանկարներով եւ Թորամանյանի տեքստերով ու կազմողների ծանոթագրություններով՝ ինչդեպ հայերեն, այնդեպ էլ թարգմանված ռուսերեն ու անգլերեն: Այս աշխատանքը մեծ բարեխղճությամբ հիմնականում իրականաց-

նում է Կարո Ղաֆադարյանի որդին՝ ճարտարապետ Գրիգոր Ղաֆադարյանը: Արդեն տղագրվել է չորս տղակ՝ նվիրված Անիի հուշարձաններին եւ Նոռոմոսի վանքին:

Մեծ է Թորոս Թորամանյանի վաստակը հայկական մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Նրա մտերիմ բարեկամ, հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը գրել է. «Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս ճարտարապետն այդ քարացածը վերածել էր կենդանի երգի»: Շարունակելով այս գեղարվեստական բնութագրումը՝ կարելի է իրավամբ ասել, որ Թորամանյանը հայ ճարտարապետության ուսումնասիրման, նրա ինքնատիպությունն ու արժանիքները վեր հանելու գործում կատարեց այն, ինչը Կոմիտասը՝ հայ երաժշտական մշակույթի բնագավառում: Փաստորեն, «Թորամանյանը հայ ճարտարապետության Կոմիտասն է հանդիսանում»:

Չվարթնոց տաճարի մանրակերտն ըստ Թ. Թորամանյանի



TOROS TORAMANIAN

Murad Hasratyan
Doctor in Architecture
Corresponding member of the NASRA

The founder of scientific research in Armenian architecture Toros Toramania (1864-1934) started his career as an investigator in 1903, participating in the excavations of ancient Armenian capital Ani. Further he observed the ancient and medieval monuments entirely, classified them and adapted the history of Armenian architecture substantiated the independence of the latter's formation and development, explaining many important questions in this field.

ТОРОС ТОРАМАНИАН

МУРАД АСРАТЯН
Доктор архитектуры, профессор,
член корреспондент НАН АР

Основоположник научного исследования армянской архитектуры Торос Торамания (1864-1934 гг.) начал свою деятельность в качестве исследователя в 1903 г., приняв участие в раскопках столицы исторической Армении Ани. В дальнейшем он всесторонне изучил древние и средневековые армянские памятники, разработал их классификацию и периодизацию истории армянской архитектуры, обосновал самостоятельность ее происхождения и развития, осветив многие важные вопросы в этой области.